

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅԿԵ-ՌՅԿԸ

ՀԱՏԱՐ

ՁԳ



1926

ԴԵԿՏԵՄԵՐ

ԹԻԻ 12

Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Գ Ի Ի Ղ Ա Կ Ա Ն Տ Ա Ն

(ԽՐԱՐԱՂԻ ՔԱՌԱՏԱՄՆ)

ՀՆԴԻՈՒՆԵՑԱՆՔ շնորհակալութեամբ Պրոֆ. Ստեփան Լիսիցեանի երկու ուսումնասիրութիւնները՝ հայ գիւղական տների ներքին բաժանման և շինուածքի մասին, որոնք կարդացել է կովկասի Պատմա-Հնագիտական Կաճառի ներկայութեան. մինչ յունուարի 29ին, երկրորդը Դիկու. 7ին յույն 1926 թ. Յարգելի հեղինակի նպատակն է գովելի նախանձով հայկական եկեղեցու ճարտարապետական ստեղծագործութեան դասն պաշտպանել: Հում նիւթերի մշակումն սկզբնաձայրից բռնած, որ է հայ գիւղացու առնէր, - արդեօք Քսենոփոնի՞ թէ աւելի հին ժամանակներից սկսած, - տալիս է իբր նախատիպ նախնական եկեղեցու որ հողովելով դարերի ընթացքում, մինչև գտել է մի բնիկ հայ ճարտարապետ, որ նորոգ և սքանչելի մի ծնունդ բնծայել է ազգին հայ եկեղեցու արդի ոճն:

Առաջին բանաստեղծեան մէջ նիւթ վերացել է Սիւնեաց աշխարհի լեռներու լանջերի վրայ՝ հայ իշխանազունների կառուցած գրեթէ գեանափոր ամբարնոցներն. առնն ամբողջութեամբ հողի մէջն է թաղուած, և ծառայում է երկու նպատակի միանգամայն, ամառն՝ զով, ձմեռն՝ տաք. և միայն մի ճակատն է արև տեսնում, որի առջև կայ մի հովոց կամ շվաք սների վերայ բռնած: Իսկ ներքսակողման քառակուսի դատարկութիւն՝ կոնտերով և գերաններով ծածկուած է, քաղելով մինչև հասնում է երդկընակն, ուսկից լոյս և արև ընդունում են. երկու կողմոցների գերանների տակ առնուած են չորս հաստ սիւներ, որոնց վերայ յննում է բոլոր ծածքն լեռնամուտ հողով թաղուած առնն, նմանցնելով թիւրս մի այրի բերանի, չորս սների կիւր են քառ-ատամ, հետեապէս ամբողջ առնն կոչում է քառատամ. Ի

409

րաց առած տեղական մի յատուկ նշանակութենէն որ կարող է ունենալ այդ քառասամ կոչումն, որ ըստ մեկնութեան յարգելի բանաբօսին նշանակում է սև առև, ЧЕРНЫЙ ДОМ.

Երկրորդ բանախօսութեան նիւթ վերցնում է Բարձր Հայքի գիւղական տներն, Արզրումի, Երզնկեանի և Բասենու վրայ կարելի էր աւելցնել Մշու, Խնուսի, Ալաշկերտի և նաև մեր Շորակեալու գիւղական տներն, Նասապետական ձևն ամէն տեղ նոյնն է, չնչին տարբերութեամբ: Արտաշէս Բի. բարեկարգած Հայաստանի տներն, ախոռներն, զոմերն՝ Թաււէջ, ռըքան տարբեր էին արդիականներէն, հարց է դա: Բարձր Հայքի տների յատակագծերն փոքր ի շատէ արդարացնում են յարգելի բանախօսի աշխատութիւնը, որ մի հանգոյց կարելի է համարել զարգացման ճանապարհի վերայ, զաղափարների յարմար շաղկապումով նոր ստեղծագործութեան յանգիլ: Բայց այս տեղ գիւղական տներն և ախոռներն այնքան ճարտարապետական արուեստով զնագրուած են, որ կեղտոտ ախոռի, ծխոտած տան ծուռիկ մուռիկ շինութիւններն մէկն պիտի երևակայէ մի ճարտարարուեստ կերտուածք յունական ճաշակով, և պիտի համոզուի իսկոյն թէ բաց ի հայկականէ, կարող եղած է հայ ճարտարապետն զտիչ լինելու նաև յունական բազիլիկայի և դամբանների ոճին: Օրինակի համար գծ. Շ. 1 յիշեցնում է յոյն-հռոմէական բազիլիկաներ իւր երկտող սիւներով, և ի միջին թրքնոցի ցարի տեղն, եղած լինի Դիոսի արձանի պատուանդանն կամ մի բազին: Միւս բաժանմունքներն պաշտամունքի վերաբերեալ կամ քուրմերի բնակարանները:

Դարձեալ ի նկատի առնելով B¹/₂ B¹/₃ B¹/₄ նկարներն պիտի կարծէ ունենալ առջև հռոմէական դամբաններէն նմուշներ, որոնք կանգնած են Հռոմայեցիներ քաղաքից դուրս, զլիւսուր ճանապարհների երկու կողմերին, որտեղից անցնելով լէգէոնական զունգերն, ներընչելով հայրենա-

սիրութեամբ գնում էին հեռու ազգերու և աշխարհներու տիրելու համար:

Արդարև շատ բնական թուում է քանտր-կամ քատրաձախի II, II թոնիրի տեղն՝ կարծել մի խորանի (abside) մէջ դրուած մահարձանի տեղը, իսկ III, III և այլն սենեակներն պատրաստուած հռոմէական ադամանոցներ (Columbarium) ուր որմների վրայ աչքուքների մէջ դրուած են մարմարեայ սխալներ կամ կոտիկներ ընտանիքի անդամների աճիւններն պահելու համար:

Ոչ միայն Հայոց գիւղացու տներն մեզ հետաքրքրում էին, այլ նաև հին քաղաքների, մասնաւորապէս Հին Ախալցխայի (իշխանաց գիւղ կոչուածը) Ռարաթ Թաղի տներն, որոց մէջ « Դարպաս » կոչուածն յոյժ հաճելի թուեցաւ՝ երբ առջին անգամ 1883թ. առիթ ունեցանք հարամանոկ ծածրը գնալու այն տեղ: Գմբեթաւորեալ առիքով, խորանձև քանդակուած փայտերով մինչև երդկիրնակն թատր օճախն կամարով բաժնուած տախտէն, ունէր կողմնակի տեղեր: տախտր կահաւորած էր բազմոցներիով: Ապա երբ 1885ին Հոռոմ գնացի ու տեսի Պանթէոնն, յիշեցի դարպասն, փոքրիկ այտ և գեղ ջուկ. բայց զաղափարն նոյն էր, գործադրութիւնն այլ:

Մերը բնական է մի ակնարկ էր այցելութեան պահուն, ոչ ուսումնասիրութիւն, ուստի փակագեղի էր ծանօթանալ Պրոֆ. Չուպինաշվիլու և Սեվերովի հրատարակութեան «հետ», որոչ «զաղափար կազմելու համար»:

Համակրութեամբ վերաբերում եմ դէպ ի Պրոֆ. Լիսիցեանի նախածնունդութիւնը և ձայնակցում նրա հրաւերին յառաջ վարել այս ուղղութեամբ ուսումնասիրութիւններ հայրենի հողի վրայ, մանաւանդ երբ յաջողի իրագործել նոյն իսկ քրիստոնէական նախկին դարերու աւերակների պեղումները, բուցել յանկարծ յայտնուի կոապաշտական ժամանակից մնացած մահանների յատակագծեր, նոքա մճռական դեր կարող են կատարել ներկայ պայ-

քարի նիւթ եղած ճարտարապետական ոճին, որը կարելի է կոչել Հայկական լափ (կարգ) (Ordre Arménien);

*
**

Հարևանցի ասնք որ արևմուտքում արդէն շատ ուսումնասիրուած է եկեղեցական ճարտարապետութեան սկզբնական յղացումն, գործադրութիւնն և զարգացումն: Ուսումնասիրողներըց ոմանք առնուած են նախատիպար յունական տունը, ուրիշներ հռոմէականը: Առանց դատաւոր կանգնելու երկու կարծիքների միջև մեզ թո՛ւի, զիցուք թէ առանձնականի մի տուն լինելու է նախատիպար յետագայ եկեղեցիների, առաւելութիւնն տալու է յունականին, որի բաժանումներն յարմարագոյն են հին եկեղեցու խորհրդական ծէսէրին և հաւատացելոց զանազան դասակարգութիւններին. մինչ հռոմէականն նախ՝ որ պարզ է և երկրորդ հիմն զարձեւալ յունականն է, զի հռոմէացիք, հետեւը են յոյներին, ինչ որ երևում է Պոմպէայի աւերակներէրց, որ պատկանում էր Միծն Յունաստանին, որի բնակչութիւնն յոյներ էին:

Մինք մի անգամ 1914 թ. Հոռոմով ներկայ գտնուեցինք Պրոֆ. Կանցլէրի դասախօսութեան, Եկեղեցական երգի բարձրագոյն Դպրոցի մէջ. նա ճգնում էր բացատրել և ապացուցանել թէ հռոմէական տունն միտք տուած է միջնադարեան բազիլիկաների կառուցման: Յայտնի է համազօր չէին փաստերը և նմանութիւնները, մինչև մեղքնալու եկաւ նեղը մտած սուուցչապետին, ու մտքէս ասի. Տէ՛ հէր օրհնած, մէկ գնա՛ Հայաստան և կու տեսնես քո երգչաձմ տանարի գաղափարն հայ տների և ախոռների մէջ. ուր փոխանակ մարդիկ խառն ի խուռն լեցուելու, ամէն մի փակի մէջ միմի անասուն որոճում են. իսկ դպրաց դասն Schola cantorum, ախոռի օտան է գամի ճակատն շինուած, ուր բուխերիկի մէջ անշէջ վատում է Որմզաւկան կրակն:

Հուսկ երբ կարդացինք Պրոֆ. լիսիցեանի բանախօսութիւններն յիրաւի զուարճացաւ սիրտս և յիշեցի անցեալն. երբ մտքիցս չէր անցնի թէ մի օր Հայկական ինքնուրոյն ճարտարապետութեան հարցն պիտի բարձրանայ գիտնականների միջև, և հարկ պիտի լինի դիմել հայ գիւղացու տանը և ախոռին մեր ազգային դատը պաշտպանելու համար: Որով ուրախ պիտի լինինք ընթեռնուլ, նայն ուղղութեամբ նայն յարգելի Պրոֆ-ի կամ այլոց նոր ուսումնասիրութիւններ, մինչև որ յաջողի երկնքի պայծառ աստղածամուկ կապոյտ կամարի տակ հետազոտութիւնները հաստատեն հայ մտքի ծնունդ մեր հրաշապայծառ, յոսազարդ և անհնաճ կաթողիկէն Հայոց:

Հ. Գ. Ն.

« Ա. Մ. Ե. Ն. »

Ամէն, երբայցեղենն, յունարէն և արաբերէն ամի՛ն երբ բառերու վերջը գրուած է՝ կը նշանակէ. Այո՛, այդպէս է, և այդպէս ըլլայ. իսկ երբ սկիզբը դրո՛ւի՛ կը նշանակէ Ստոյգ, ստուգութեամբ, հաստատութեամբ, յիրաւի, ճշմարիտ, այս այսպէս է, և այսպէս ըլլայ: Ամէն կը նշանակէ՝ անսխալ ճշմարտութիւնն՝ Աստուած: Ասոր օրինակ Յայտնութեան մէջ կ'ընթեռնուրք. « Այսպէս ասէ Ամէնն՝ վկայն հաւատարիմ և ճշմարիտ »: Ըստ Լուզուիկ Փէնսպէրկի (Louis Ginsberg) հին երբալայկան բառիս պէս չկայ ընդհանրացած այլ բառ, որ գործածուի ըրիտոտնէիցմէ, մահմետականներէ և հրէաներէ: Հին¹ և նոր² կտակարանի մէջ շատ տեղեր կը գործածուի բառս վերոյիշեալ իմաստն:

1. Երեմ. ԺԱ, 5. Իւ. 6. — Ա. Թգ. Ա. 36. — ԹԻ. Ե. 22. — Բ Օր. Իէ 15-26. — Ա. Մ. ԺՁ. 36. և այլն.
2. « Ամէն ասեմ » Աւետարանաց մէջ յիսուսէն ասելի բնութե է: Հոռոմ Ա. 25. Փիւ. Դ. 20. Ա. ՏԻմ. 2. 21. — և այլն.